Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-696-06.11.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սնանկության մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Պարտապանի կողմից սեփական սնանկությունը ճանաչելու կամ սնանկության վտանգի դիմում ներկայացնելու դեպքում պարտապանը դիմումին կից պարտավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1) հիմնավորումներ պարտատերերի պահանջների ամբողջ ծավալով բավարարման անհնարինության կամ տնտեսական գործունեության էական վատթարացման վերաբերյալ, որոնք հիմք են հանդիսացել սնանկության դիմում ներկայացնելու համար.

2) պարտապանի պարտատերերի և պարտապանների (այդ թվում՝ այն քաղաքացիների, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար) ցուցակը, նրանց անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը և առանձին պարտավորությունների, ներառյալ՝ արտահաշվեկշռային պարտավորությունների բնույթը, չափը և հիմքերը: Նշված տեղեկությունները պետք է ներառեն նաև այն պարտավորությունները, որոնց ժամկետը չի լրացել, ինչպես նաև պարտապանի տված երաշխիքները և ստանձնած այլ պարտավորությունները.

3) եթե պարտապանը անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ է, ապա պարտապանի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները.

4) եթե պարտապանը տնտեսական ընկերակցություն է, ապա մասնակիցների (լիակատար ընկերների) անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը և պետական գրանցման տվյալները.

5) պարտապանի հայտարարությունը՝ ֆինանսական առողջացման մտադրության մասին.

6) դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 90 օրից ոչ ավելի վաղեմություն ունեցող տեղեկություններ (ապացույցներ) պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի և այլ գույքային իրավունքների առկայության կամ բացակայության մասին, այդ թվում նաև՝ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված գույքային իրավունքների առկայության կամ բացակայության մասին՝ ստացված անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքի (իրավունքների) պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններից, իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնից, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունից, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունից, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերությունից, Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերից, Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից՝ պարտավորության կատարման վերաբերյալ կատարողական վարույթ հարուցված լինելու դեպքում, պարտապանի անշարժ գույքի գտնվելու, շարժական գույքի հաշվառման, իսկ անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ հանդիսացող պարտապանի դեպքում նաև վերջիններիս գործունեության իրականացման վայրի տեղական ինքնակառավարման մարմնից.

7) եթե պարտապանը ֆիզիկական անձ է՝ հարկային մարմնի կողմից փաստաթղթային տեսքով տրված ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքը.

8) կամավոր սնանկության կամ սնանկության վտանգի մասին դատարան ներկայացվող դիմումի և կից փաստաթղթերի պատճենները բոլոր պարտատերերին ուղարկելու մասին ապացույցները.

9) սնանկության վտանգի դիմումի դեպքում՝ սույն օրենքի պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական առողջացման ծրագիրը:»:

Հոդված 2. Օրենքի 15.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «, և փակցնել դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում» կետադրական նշանը և բառերը հանել:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ պարբերությունում «2-րդ կետով» բառերը փոխարինել «1-ին կետով» բառերով.

2) լրացնել նոր 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Պարտապանի գրավոր առարկությունը պետք է պարունակի ներկայացված պահանջի դեմ մասնակի կամ ամբողջությամբ առարկելու մասին դիրքորոշում, առկայության դեպքում պետք է վկայակոչվեն առարկությունների հիմքում դրված փաստերը և կից ներկայացվեն այն ապացույցները, որոնք հաստատում են առարկությունների հիմքում դրված փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե որ ապացույցն ինչ փաստի հաստատմանն է ուղղված: Պարտապանն իրավունք ունի մինչև դատական նիստը կամ դատական նիստի ընթացքում լրացնել առարկությունը կամ ներկայացնել լրացուցիչ ապացույցներ, եթե հիմնավորում է դրանք առարկությամբ ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող առարկությունը դատարանի կողմից ենթակա չէ քննարկման:»:

Հոդված 4. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «բ» կետում լրացնել նոր՝ երրորդ նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Կառավարչի կողմից պարտատերերի առաջին ժողովի անցկացման վայրի վերաբերյալ միջնորդություն ներկայացված լինելու դեպքում ժողովը նշանակվում է այդ միջնորդությամբ նշված վայրում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում:»,

2) 1-ին մասի «դ» կետում հանել «և փակցնել դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում» բառերը:

Հոդված 5. Օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Սնանկության գործի վարույթը կարճվելու, սնանկության դիմումը մերժվելու, ինչպես նաև ժամանակավոր կառավարչի՝ կառավարիչ չնշանակվելու դեպքերում ժամանակավոր կառավարչի վարձատրությունը կատարվում է միանվագ կարգով՝ դատարանի կողմից համապատասխան վճիռը (որոշումը) կայացնելուց հետո՝ դրան նախորդող վերջին մեկ տարում համապատասխանաբար պարտապանի տնօրենի համար հաշվարկված ամսական միջին աշխատավարձի կամ ֆիզիկական անձ պարտապանի ամսական միջին եկամտի 1/12-ի և որպես ժամանակավոր կառավարիչ փաստացի աշխատած ամիսների արտադրյալի չափով: Այն դեպքում, երբ ֆիզիկական անձ պարտապանը՝ վերջին մեկ ամսվա ընթացքում եկամուտ չի ունեցել, ապա ժամանակավոր կառավարչի վարձատրությունը կատարվում է միանվագ կարգով՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի 1/12-ի և որպես ժամանակավոր կառավարիչ փաստացի աշխատած ամիսների արտադրյալի չափով:»:

Հոդված 6. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել նոր՝ «թ. 1» կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«թ. 1) իր կողմից վարվող բոլոր գործերով կազմակերպվող էլեկտրոնային աճուրդների մասնակիցներից գանձման ենթակա գումարները հավաքագրելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերից մեկում իր անունով բացում է մեկ դրամային հաշիվ, որը ունի սնանկության հատուկ հաշվի կարգավիճակ, և աճուրդի ավարտից հետո յուրաքանչյուր գույքի մասով մուտքագրված գումարները փոխանցում է այդ գույքի վերաբերյալ համապատասխան սնանկության գործով բացված սնանկության հատուկ հաշվեհամարին:».

2) 1-ին մասի «ժ» և «ժ.1» կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ժ) պարտապանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դատարանի որոշման հիման վրա արգելանք է դնում կամ հանում արգելանքը, որի դեպքում դրա հիման վրա կազմված կատարողական թերթն անհապաղ ուղարկվում է հարկադիր կատարման.

ժ.1) միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պարտապանի գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին՝ կցելով գույքի հայտնաբերման անհնարինության հիմքերը, որի բավարարման դեպքում դրա հիման վրա կազմված կատարողական թերթն անհապաղ ուղարկվում է հարկադիր կատարման.».

3) 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել»:

Հոդված 8. Օրենքի 29.1-ին հոդվածում՝

1) 1-ին մասում «ժամկետով, բայց ոչ ավելի, քան հինգ տարի ժամկետով» բառերը փոխարինել «ողջ ժամկետի ընթացքում» բառերով.

2) 1-ին մասում լրացնել նոր 1.1-ին կետ.

«1.1) հանրային ծառայող է՝ հանրային ծառայության մեջ գտնվելու ողջ ժամկետի ընթացքում.».

3) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-3-րդ և 5-9-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության մասին կառավարիչը պարտավոր է տասնօրյա ժամկետում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը և կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությանը՝ կցելով կասեցման հիմքերը հավաստող համապատասխան փաստաթղթերը: Սույն հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով նախատեսված հիմքով կառավարչի գործունեությունը կասեցվում է, եթե կառավարիչը որակավորման վկայական ստանալուց հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն չի ներկայացնում կասեցման հիմքը վերանալը հավաստող համապատասխան փաստաթղթեր:»:

Հոդված 9. Օրենքի 29.2-ին հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում «1-3-րդ կետերով» բառերը և թվերը փոխարինել «2-3-րդ կետերով» բառերով և թվերով:

Հոդված 10. Օրենքի 30-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «՝ չներառելով գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունների գումարը» կետադրական նշանը և բառերը հանել.

2) 2-րդ մասում «դատական ակտով՝» բառերը և կետադրական նշանը հանել:

Հոդված 11. Օրենքի 32-րդ հոդվածում լրացնել նոր 4-րդ մաս.

«4. Դատարանն իր նախաձեռնությամբ վաղաժամկետ դադարեցնում է նոր նշանակված կառավարչի լիազորությունները, եթե սույն հոդվածի հիմքով ավելի շուտ նշանակված կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ որոշումը բողոքարկման արդյունքում վերացվել է:»:

Հոդված 12. Օրենքի 33-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երրորդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ մասում առաջին նախադասությունից առաջ լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ժողովը անցկացվում է առկա եղանակով՝ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց մեկ վայրում հավաքվելու միջոցով, կամ հեռավար՝ էլեկտրոնային կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ էլեկտրոնային համակարգի միջոցով, կամ գրավոր հարցումների եղանակով:».

3) 3-րդ մասում առաջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Այն դեպքում, երբ պարտատերերի ժողովը հեռավար եղանակով անցկացնելու վերաբերյալ ներկայացվում է առարկություն, ապա ժողովն անցկացվում է առկա եղանակով:

Հեռավար՝ էլեկտրոնային կապի այլ միջոցների օգտագործմամբ, ժողովի արձանագրությունը և դրանց կից ներկայացվող փաստաթղթերը կարող են կազմվել և ներկայացվել էլեկտրոնային տարբերակով: Ժողովի մասնակիցների կողմից ստորագրման ենթակա փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային ստորագրության առկայությամբ, իսկ այլ փաստաթղթերը՝ սկանավորված տարբերակով:».

4) 9-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13. Օրենքի 34-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ նախադասությունում «օգտագործմամբ» բառից հետո լրացնել «կամ էլեկտրոնային համակարգի միջոցով» բառերը:

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Առկա ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

ա) պարտապանի անվանումը (անունը) և գտնվելու (բնակության) վայրը.

բ) սնանկության գործի համարը.

գ) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամանակը և վայրը.

դ) ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը, քվեարկության դրվող հարցերի բովանդակությունները.

ե) ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին ծանոթանալու կարգը.

զ) ժողովի մասնակիցների գրանցման կարգը:»:

3) լրացնել նոր 4-րդ և 5-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Էլեկտրոնային կապի այլ միջոցների կիրառմամբ հեռավար ժողովի անցկացման մասին ծանուցումը պետք է պարունակի՝

ա) պարտապանի անվանումը (անունը) և գտնվելու (բնակության) վայրը.

բ) սնանկության գործի համարը.

գ) պարտատերերի հաշվառման կարգը և վերջնաժամկետը (միայն առաջին ժողովի դեպքում).

դ) ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը, քվեարկության դրվող հարցերի բովանդակությունները.

ե) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամանակը:

5. Գրավոր հարցումների եղանակով անցկացվող ժողովի վերաբերյալ ծանուցումը, բացի սույն հոդվածի 4-րդ մասի «ա»-«դ» կետերում նշված պահանջների, պետք է պարունակի նաև օրակարգի հարցերին առնչվող նյութերը և քվեաթերթիկը, որի վրա պետք է նշված լինի լրացված քվեաթերթիկները կառավարչին ուղարկելու կարգը և վերջնաժամկետը:»:

Հոդված 14. Օրենքի 37-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 37. Քվեարկության քվեաթերթիկը**

1. Ժողովում քվեարկությունն իրականացվում է քվեաթերթիկների միջոցով:

2. Քվեաթերթիկները կազմում է կառավարիչը:

3. Քվեաթերթիկը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

ա) պարտապանի անվանումը (անունը) և սնանկության գործի համարը,

բ) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամանակը և վայրը (առկա ժողովի դեպքում).

գ) քվեարկության դրված հարցերի բովանդակությունները, քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ «կողմ», «դեմ».

դ) ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրի պարտատերը.

ե) քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը,

զ) քվեաթերթիկը կառավարչին ուղարկելու կարգը և վերջնաժամկետը:

4. Ժողովներում քվեարկությունների անցկացման և կազմակերպման կարգը որոշվում է ժողովի կանոնակարգով:»:

Հոդված 15. Օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասում լրացնել նոր երկրորդ նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Նիստն անցկացվում է առկա եղանակով՝ խորհրդի անդամների մեկ վայրում հավաքվելու միջոցով, կամ հեռավար՝ էլեկտրոնային կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ էլեկտրոնային համակարգի միջոցով: Խորհրդի անդամները խորհրդի նիստի մասին պատշաճ ծանուցվում են սույն օրենքով սահմանված կարգով՝ նիստից առնվազն երեք օր առաջ:»:

Հոդված 16. Օրենքի 39.1-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «մերժվելու» բառից առաջ լրացնել «39.2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի հիմքով» բառերը.

2) լրացնել նոր 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Սույն հոդվածով նախատեսված դիմումը ներկայացնելու ժամկետի ավարտից հետո ներկայացվելու և ժամկետի բացթողումը հարգելի ճանաչվելու դեպքերում քննարկվում է դատարանի կողմից՝ սույն օրենքի 39.2-րդ հոդվածով սահմանված կարգով:»:

Հոդված 17. Օրենքի 39.2-րդ հոդվածի 5-րդ մասում լրացնել նոր 4-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) դիմումը ներկայացվել է 39.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի ավարտից հետո և չի ներկայացվել ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու մասին միջնորդություն կամ ներկայացված միջնորդությունը մերժվել է:»:

Հոդված 18. Օրենքի 42-րդ հոդվածի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Կառավարիչն իր կողմից վարվող գրանցամատյանում հաշվառում է պարտապանի նկատմամբ ներկայացված պահանջների չափերը, առաջնահերթությունը, պահանջների փոփոխությունները:»:

Հոդված 19. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասում «ձեռք է բերում քվեարկության ձայնի իրավունք» բառերը փոխարինել «ձեռք է բերում պարտապանին պատկանող իր համապատասխան պարտավորության համար չապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցների բաշխմանը մասնակցելու իրավունք» բառերով:

Հոդված 20. Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասում «կասեցումը» բառից հետո լրացնել «, որից հետո համարվում են լուծված» կետադրական նշանը և բառերը:

Հոդված 21. Օրենքի 46-րդ հոդվածում՝

1) 2.1-ին մասում լրացնել նոր երկրորդ և երրորդ նախադասություններ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Դատարանը թերությունները վերացնելու համար սահմանում է մինչև եռօրյա ժամկետ: Թերությունները վերացվելու և դատարանի կողմից սահմանված ժամկետում պահանջը դատարան կրկին ներկայացվելու դեպքում համարվում է ժամկետում ներկայացված:».

2) 5-րդ մասում «առաջին մասով» բառերը փոխարինել «1-ին կամ 2.1-ին մասերով» թվերով և բառերով.

3) 6-րդ մասում «Պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում,» բառերից հետո լրացնել «իսկ դատարանի կողմից թերությունների վերացման համար ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ այդ ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում,» բառերը.

4) 9-րդ մասում՝

ա) «Պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումից հետո» բառերը փոխարինել «Պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո» բառերով.

բ) «սույն օրենքի 85-րդ հոդվածին համապատասխան» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո առաջացած պահանջների մասով, որոնց առաջնահերթությունը սահմանված է օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը.

5) 10-րդ մասում «ապահովվածությունը» բառից հետո լրացնել «, ըստ անհրաժեշտության փոփոխություն կատարելով պահանջի վերաբերյալ կայացված դատական ակտում» բառերը:

Հոդված 22. Օրենքի 60-րդ հոդվածում լրացնել նոր 1.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Ֆինանսական առողջացման ծրագրին կից դատարան է ներկայացվում ֆինանսական առողջացման ծրագրի օրինակը կառավարչին ուղարկված լինելու վերաբերյալ ապացույցը (բացառությամբ ծրագիրը կառավարչի կողմից ներկայացվելու դեպքերի):»:

Հոդված 23. Օրենքի 62-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 62. Ֆինանսական առողջացման ծրագրի քննարկումը

1. Ֆինանսական առողջացման ծրագիրն ստանալուց հետո՝ երկու օրվա ընթացքում, դատարանը որոշում է ընդունում ֆինանսական առողջացման ծրագիրն վերադարձնելու մասին, եթե այն չի համապատասխանում սույն օրենքով սահմանված պահանջներին կամ չի ներկայացվել ֆինանսական առողջացման ծրագրի օրինակը

կառավարչին ուղարկված լինելու վերաբերյալ ապացույցը (բացառությամբ ծրագիրը կառավարչի կողմից ներկայացվելու դեպքերի): Դատարանը որոշմամբ նշում է առկա թերությունները և սահմանում է եռօրյա ժամկետ՝ առկա թերությունները շտկելու և ֆինանսական առողջացման ծրագիրը կրկին ներկայացնելու համար: Մինչև որոշում ընդունելը դատարանը կարող է ծրագիր ներկայացնող անձից պահանջել ներկայացնել ծրագրի վերաբերյալ փորձագետի եզրակացություն:

2. Ֆինանսական առողջացման ծրագիրը վերադարձնելու մասին որոշումը ստանալուց հետո սահմանված ժամկետում թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում համարվում է ժամկետում ներկայացված:

3. Դատարանը երկօրյա ժամկետում որոշում է կայացնում ֆինանսական առողջացման ծրագիրն առանց քննության թողնելու մասին, եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով ֆինանսական առողջացման ծրագիրը վերադարձվելու դեպքում սահմանված ժամկետում թերությունները չեն վերացվել կամ կրկին ներկայացվելու դեպքում թույլ են տրվել նոր խախտումներ:

4. Եթե ֆինանսական առողջացման ծրագիրն ստանալուց կամ ֆինանսական առողջացման ծրագիրը վերադարձվելու դեպքում կրկին ներկայացվելուց հետո՝ երկօրյա ժամկետում, դատարանը որոշում չի ընդունել ֆինանսական առողջացման ծրագիրն վերադարձնելու կամ առանց քննության թողնելու մասին, ապա կառավարչին, պարտապանին և իրեն հայտնի բոլոր պարտատերերին ծանուցում է դատարանում ֆինանսական առողջացման ծրագրի առկայության և ծրագրին նրանց ծանոթանալու իրավունքի մասին:

5. Կառավարիչը ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու՝ սույն օրենքով կամ երկարաձգման մասին դատարանի որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո ոչ ուշ, քան 20 օրվա ընթացքում հրավիրում է ժողով ֆինանսական առողջացման ծրագիրը (ծրագրերը) քննարկելու նպատակով, որին հրավիրվում է պարտապանը:»:

Հոդված 24. Օրենքի 73-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 73. Պարտապանի գործունեության վերսկսումը**

1. Եթե պարտապանի գործունեությունը կասեցվել է սույն օրենքի 72-րդ հոդվածով նախատեսված կարգով, ապա կառավարչի միջնորդության հիման վրա կայացված դատարանի որոշմամբ պարտապանը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն վերսկսել իր գործունեությունը մինչև մեկ տարի ժամանակով, եթե պարտապանի գործունեության վերսկսումը կարող է ավելացնել պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունը: Կառավարչի միջնորդության հիման վրա դատարանը որոշում է կայացնում պարտապանի գործունեությունը մասնակի կամ ամբողջությամբ վերսկսելու մասին, որի վերաբերյալ բոլոր պարտատերերը պատշաճ կերպով ծանուցվում են որոշումը կայացնելու պահից եռօրյա ժամկետում:

2. Եթե դատարանի՝ պարտապանի գործունեությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն վերսկսելու վերաբերյալ որոշումը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, պարտատերերից որևէ մեկը գրավոր առարկություն է ներկայացնում դատարան, ապա կառավարիչը հրավիրում է խորհրդի նիստ, իսկ վերջինի ձևավորված չլինելու դեպքում ժողով՝ քննարկման դնելով այդ հարցը: Խորհրդի կամ ժողովի որոշումը և նիստի արձանագրությունը կառավարիչը ներկայացնում է դատարան:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում դատարանն առանց դատական նիստ հրավիրելու որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ այն մերժելու մասին: Դատարանի որոշումը եռօրյա ժամկետում կառավարիչն ուղարկում է պարտատերերին և հարկային համապատասխան մարմնին: Դատարանի որոշումը կարող է բողոքարկվել:

4. Պարտապանի գործունեությունը ժողովի որոշման և կառավարչի միջնորդության հիման վրա կայացված դատարանի որոշմամբ կարող է երկարաձգվել, եթե պարտապանի վերսկսված գործունեությունը ավելացրել է պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունը: Այդ դեպքում պարտապանի գործունեության երկարաձգման ժամկետը չի կարող գերազանցել ընդհանուր 36 ամիսը:

5. Պարտապանի գործունեությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն վերսկսելը արգելք չի հանդիսանում պարտապանի գույքի հաշվին պահանջի բավարարման գործընթացը իրականացնելու համար, այդ թվում սույն օրենքի 75-րդ, 76-րդ և 77-րդ հոդվածներով նախատեսված իրավակարգավորումներով, բացառությամբ այն գույքի, որն օգտագործվում է պարտապանի վերսկսված գործունեությունը ապահովելու համար:»:

Հոդված 25. Օրենքի 75-րդ հոդվածի 1. 1-ին մասում «կառավարիչն իրավունք ունի դիմելու դատարան և պահանջելու» բառերը փոխարինել «կառավարիչը դիմում է դատարան՝ միջնորդելով» բառերով:

Հոդված 26. Օրենքի 76-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «, աճուրդի անցկացման օրը» կետադրական նշանը և բառերը.

2) 2-րդ մասում լրացնել նոր՝ չորրորդ և հինգերորդ նախադասություններ՝ հետևյալ բովանդակությամբ. «Եթե առաջարկվող ամենաբարձր մեկնարկային գնով հայտարարված աճուրդը չի կայանում, ապա գույքը վաճառքի է ներկայացվում հաջորդ՝ ամենաբարձր մեկնարկային գնով, և այս կարգով աճուրդներ են կազմակերպվում այնքան ժամանակ, քանի դեռ գույքը վաճառքի չի ներկայացվել ամենացածր մեկնարկային գինը ներառող առարկությամբ առաջարկված մեկնարկային գնով: Եթե պարտապանի գույքը առարկություն ներկայացրած պարտատիրոջ առաջարկած գնով աճուրդի ներկայացվելու դեպքում չի վաճառվել, ապա այդ պարտատիրոջ վճարած դեպոզիտի գումարը չի վերադարձվում:».

3) 3-րդ մասի «բ» կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «բ) գույքի վաճառքը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով թույլատրելու, գույքն այդ կարգով չվաճառվելու դեպքում այն կառավարչի միջնորդությամբ սահմանված կարգով վաճառելու մասին, եթե սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան ներկայացվել է առնվազն մեկ առարկություն.».

4) 4-րդ մասի առաջին պարբերությունում հանել երկրորդ նախադասությունը, իսկ երկրորդ պարբերությունում «շուկայական գների կտրուկ փոփոխություն» բառերից հետո լրացնել «, կամ եթե ապահովված պարտատերը կամ գրավատուն օրենքով սահմանված կարգով օգտվել են սույն օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ կամ 10-րդ մասերով սահմանված իրենց իրավունքներից, կամ եթե դատարանի որոշմամբ հրապարակային սակարկություններով վաճառքի ենթակա գույքի վերաբերյալ դատարանը կայացնում է ուղղակի վաճառքով վաճառելու թույլտվություն տալու մասին որոշում, կամ սույն օրենքով սահմանված կարգով տվյալ գույքը ենթակա է իրացման այլ սնանկության վարույթի շրջանակներում» բառերը.

5) 5-րդ մասում հանել «, որը փակցվում է նաև դատարանի շենքում՝ հատուկ հատկացված տեղում» բառերը.

6) լրացնել նոր՝ 9.1-ին և 9.2-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.1. Սնանկության գործով հրապարակային սակարկություններին չեն կարող մասնակցել՝

1) սակարկությունների կազմակերպիչ կառավարիչը,

2) սակարկությունների կազմակերպիչ կառավարչի երեխաները, ծնողները, ամուսինը, տատը, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև սակարկությունների կազմակերպիչ կառավարչի ամուսնու ծնողները, տատը, պապը, եղբայրները և քույրերը,

3) այն անձինք, որոնք սակարկություններով վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

9.2. Սակարկությունների արդյունքում վաճառված գույքի առուվաճառքի պայմանագրեր կնքելիս պայմանագրերի էական պայմանները պետք է համապատասխանեն սակարկությունների մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված պայմաններին:»:

7) լրացնել նոր՝ 11-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«11. Սնանկության վարույթում կազմակերպված էլեկտրոնային աճուրդը կարող է անվավեր ճանաչվել միայն շահագրգիռ անձի հայցով՝ դատական կարգով, եթե աճուրդն անց է կացվել սույն հոդվածի 9.1-ին և 9.2-րդ մասերով սահմանված

պահանջների կամ սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգում որպես էական նշված պայմանների խախտումներով: Ընդ որում, սույն հոդվածի 9.1-ին մասի 3-րդ կետով սահմանված դեպքում աճուրդը կարող է անվավեր ճանաչվել, եթե սակարկությունների արդյունքում հաղթող է ճանաչվել այն անձը, որը սակարկություններով վաճառվող լոտի նկատմամբ չէր կարող ունենալ սեփականության իրավունք:»:

Հոդված 27. Օրենքի 77-րդ հոդվածում լրացնել նոր՝ 1.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Կառավարիչը պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող՝ գրավի առարկա չհանդիսացող գույքում պարտապանի բաժինը այդ գույքի շուկայական գնահատված գնի՝ պարտապանի բաժնին համապատասխան արժեքով գնելու վերաբերյալ ծանուցում է ուղարկում այդ գույքի համասեփականատերերին:

Եթե գույքի բոլոր համասեփականատերերը կառավարչին են ներկայացնում պարտապանի բաժինը առաջարկված գնով բոլոր համասեփականատերերի կամ իրենցից մեկի կամ մի քանիսի կողմից գնելու վերաբերյալ համաձայնություն, և ապացույց՝ կառավարչի առաջարկած վաճառքի գնի չափով գումարը սնանկության հատուկ հաշվեհամարին մուտքագրված լինելու վերաբերյալ, ապա կառավարիչը այդ մասին տեղեկացնում է պարտապանին և պարտատերերին և դատարան է ներկայացնում գույքում պարտապանի բաժինը համասեփականատիրոջը (համասեփականատերերին) ուղղակի վաճառքով վաճառելու թույլտվություն ստանալու մասին միջնորդություն:

Եթե պարտապանի բաժինը առաջարկված գնով գնելու ցանկություն հայտնում են ոչ բոլոր համասեփականատերերը, համաձայնությանը կից ներկայացնելով ապացույց՝ կառավարչի առաջարկած վաճառքի գնի չափով գումարը սնանկության հատուկ հաշվեհամարին մուտքագրված լինելու վերաբերյալ, ապա գույքում պարտապանի բաժինը ուղղակի վաճառքով վաճառելու թույլտվություն ստանալու մասին միջնորդությունը դատարան կարող է ներկայացվել միայն գույքում

պարտապանի բաժինը գնելու վերաբերյալ համասեփականատերերի ծանուցվելուց մեկ ամիսը լրանալուց հետո:

Միջնորդությանը կից դատարան է ներկայացվում գույքի գնահատման ակտը (անկախ գնահատողի կողմից գնահատված լինելու դեպքում՝ եզրակացությունը), կառավարչի կողմից համասեփականատերերին ուղղված ծանուցումը, վերջիններիս կողմից ծանուցված լինելու ապացույցները, գնելու ցանկություն հայտնած համասեփականատիրոջ (համասեփականատերերի) անձնագրերի պատճենները, համասեփականատերերի առկա համաձայնությունները, սնանկության հատուկ հաշվեհամարին ծանուցմամբ նշված գումարի վճարված լինելու ապացույցը, միջնորդությունը դատարան ներկայացնելու մասին պարտապանին և պարտատերերին ծանուցման ապացույցները:

Դատարանը միջնորդությունն ստանալու օրվանից մեկշաբաթյա ժամկետում կայացնում է միջնորդությունը բավարարելու և ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքում պարտապանի բաժինը գույքի համասեփականատիրոջը (համասեփականատերերին) ուղղակի վաճառքով վաճառելու թույլտվություն տալու մասին որոշում, եթե միջնորդությունը ներկայացվել է սույն մասին համապատասխան:

Եթե պարտապանի բաժինը առաջարկված գնով գնելու մասին ծանուցվելու օրվանից հետո մեկամսյա ժամկետում գույքի համասեփականատերերը կամ նրանցից առնվազն մեկը ցանկություն չեն հայտնում պարտապանի բաժինը գնելու վերաբերյալ, կամ չեն ներկայացնում ապացույց՝ կառավարչի առաջարկած վաճառքի գնի չափով գումարը սնանկության հատուկ հաշվեհամարին մուտքագրված լինելու վերաբերյալ, ապա կառավարիչը հայցադիմում է ներկայացնում սնանկության գործը վարող դատարան՝ գույքում պարտապանի բաժինն առանձնացնելու, առանձնացման անհնարինության դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և վաճառքից ստացված գումարը համասեփականատերերի միջև իրենց բաժիններին համապատասխան բաշխելու պահանջի մասին:

Անբաժանելի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին դատարանի վճիռը հիմք է գույքը կառավարչի կողմից հրապարակային սակարկություններով վաճառելու համար:»:

Հոդված 28. Օրենքի 77. 1-ին հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Կառավարչի կողմից վտարման կամ գույքը կառավարչին հանձնելու պահանջ ներկայացնելը**»

2) լրացնել նոր 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Կառավարիչը կարող է միջնորդությամբ դիմել դատարան, խնդրելով պարտավորեցնել պարտապանին կամ երրորդ անձին (եթե գույքը տիրապետվում է այլ անձի կողմից՝ փաստացի տիրապետողին)՝ իրենց պատկանող կամ ապահովված իրավունքի առարկա հանդիսացող (իրենց կողմից փաստացի տիրապետվող) շարժական գույք հանձնել կառավարչին, եթե վերջիններս չեն տրամադրում գույքը կամ խոչընդոտում են գույքագրման աշխատանքներին, աճուրդի մասնակցնի կողմից զննություն իրականացնելուն, չեն տրամադրում կամ խոչընդոտում են գույքի փոխանցումը աճուրդում հաղթած անձին, ինչպես նաև գույքը վերջիններիս տիապետության տակ թողնելը կարող է վատթարացնել գույքի փաստացի վիճակը կամ նվազեցնել գույքի արժեքը:

Միջնորդությունը պետք է պարունակի գույքը կառավարչին հանձնելու պահանջի հիմնավորումը, ինչպես նաև միջնորդության պատճենը այդ անձանց ուղարկելու մասին ապացույցները:

Միջնորդության պատճենն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, այդ անձինք կարող են միջնորդության կապակցությամբ առարկություններ ներկայացնել դատարան: Կառավարչի պահանջը լուծվում է առանց դատական նիստ հրավիրելու՝ դատարանի որոշմամբ: Միջնորդության բավարարման դեպքում դատարանի որոշման հիման վրա կազմված կատարողական թերթն ուղարկվում է հարկադիր կատարման:»:

Հոդված 29. Օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետում «պարտավորությունները» բառից հետո լրացնել «սնանկ ճանաչված պարտապանից

գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնված կամ պարտապանին այլ սնանկության գործով սնանկ ճանաչելու հիմքով՝ կարճված կամ ավարտված գործով դատական ծախսերի գումարը» բառերը:

Հոդված 30. Օրենքի 85-րդ հոդվածի 2.1-ին մասում 2-րդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պահանջները սահմանված ժամկետներում հարգելի պատճառներով չներկայացրած պարտատերերի պահանջները ընդգրկվում են տվյալ պահանջին համապատասխանող հերթում՝ համապատասխան փոփոխություն կատարելով պահանջների ցուցակում:»:

Հոդված 31. Օրենքի 90-րդ հոդվածում լրացնել նոր՝ 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Սույն օրենքի 67-րդ հոդվածի առաջին մասով, 69-րդ հոդվածի չորրորդ մասի «ա» կետով, ինչպես նաև 74-րդ և 89-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում սնանկության վերաբերյալ գործի ավարտի դեպքում դատարանը վճիռն ուղարկում է նաև կենտրոնական բանկին՝ Հայաստանի Հանրապետության բանկերին և այլ վարկային կազմակերպություններին և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիային, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային բյուրոներին ծանուցելու համար:»:

Հոդված 32. Օրենքում լրացնել նոր 10.1-ին գլուխ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**ԳԼՈՒԽ 10.1**

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 90.1. Սույն գլխի գործողության ոլորտը

1. Սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) միջոցով դատարանի, սնանկության գործով կառավարիչների, պարտապանի, պարտատերերի, ինչպես նաև սնանկության վարույթով շահագրգիռ այլ անձանց (որոնց իրավունքներին ու օրինական շահերին առնչվում կամ կարող է առնչվել սնանկության վարույթը, այդ թվում՝ գրավատու, երաշխավոր, երաշխիք տված անձ և այլն) կողմից իրականացվող գործողությունների վրա:

2. Դատարանը, սնանկության գործով կառավարիչները, պարտապանը, պարտատերերը, ինչպես նաև սնանկության վարույթով շահագրգիռ այլ անձինք սնանկության գործերի հետ կապված էլեկտրոնային համակարգից օգտվում են սույն օրենքով սահմանված կարգով, իսկ սույն օրենքով կարգավորված չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ դատարանի և դատավարության մասնակիցների համար սահմանված կարգով:

3. Էլեկտրոնային համակարգի միջոցով պատշաճ կերպով և էլեկտրոնային համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին համապատասխան կատարված գործողությունն առաջացնում է նույն հետևանքները, ինչ կառաջացներ սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով իրականացված համանման գործողությունը:

4. Էլեկտրոնային համակարգի միջոցով չեն կարող կատարվել այնպիսի գործողություններ, որոնց կատարումը էլեկտրոնային համակարգի միջոցով տեխնիկական տեսանկյունից անհնարին է: Նման անհնարինությունը չի կարող գնահատվել որպես անձի դատավարական իրավունքների սահմանափակում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան գործողությունը կարող է կատարվել սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

5. Պարտապանի գույքի վերաբերյալ էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացված հարցման՝ էլեկտրոնային համակարգի կողմից հավաստված պատասխանը հավասարեցվում է տեղեկությունը տնօրինող համապատասխան մարմնից ստացված պատասխանին:

Հոդված 90.2. Սույն գլխում օգտագործվող հասկացությունները

1. Սույն գլխի իմաստով էլեկտրոնային համակարգն օգտագործող անձ է համարվում այն ֆիզիկական անձը՝

1) ով սնանկության գործի շրջանակներում առնվազն մեկ անգամ էլեկտրոնային համակարգի միջոցով կատարել է որևէ գործողություն կամ սնանկության գործով կառավարչին ուղղված դիմումի հիման վրա գրանցվել է էլեկտրոնային համակարգում և

2) հետագայում գործը քննող դատարանին չի միջնորդել էլեկտրոնային համակարգից օգտվելու անհնարինության մասին:

2. Սույն գլխի իմաստով, իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները համարվում են համակարգն օգտագործող անձինք՝ անկախ էլեկտրոնային համակարգի միջոցով առնվազն մեկ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց:

3. Էլեկտրոնային համակարգին առնչվող այլ հասկացությունները օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իմաստով:

Հոդված 90.3. Սնանկության վարույթում էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացվող գործողությունների առանձնահատկությունները

1. էլեկտրոնային համակարգի միջոցով պարտատերերի ժողովը հրավիրվում և անցկացվում է համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին համահունչ եղանակով: Պարտատերերի ժողովը կարող է անցկացվել էլեկտրոնային համակարգի միջոցով, եթե ժողովին մասնակցելու իրավասություն ունեցող բոլոր անձինք հանդիսանում են էլեկտրոնային համակարգն օգտագործող: Անկախ ժողովի անցկացման եղանակից (առկա կամ հեռավար) ժողովի հրավիրման մասին

ծանուցումը էլեկտրոնային համակարգն օգտագործողներին կարող է ուղարկվել էլեկտրոնային համակարգի միջոցով:

2. Էլեկտրոնային համակարգի միջոցով պարտատերերի խորհրդի նիստերը հրավիրվում և անցկացվում են պարտատերերի ժողովի հրավիրման և անցկացման՝ էլեկտրոնային համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին համահունչ եղանակով:

3. Եթե պարտապանը, պարտատերերը, ինչպես նաև սնանկության վարույթով շահագրգիռ այլ անձինք էլեկտրոնային համակարգն օգտագործող անձ են, ապա կառավարիչը սույն օրենքով սահմանված իր գործառույթներն իրականացնում է էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին համահունչ եղանակով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

4. Եթե պարտապանը, պարտատերը կամ սնանկության վարույթով շահագրգիռ այլ անձը էլեկտրոնային համակարգն օգտագործող անձ չէ, ապա սնանկության վարույթում վերջինիս հասցեագրված դատավարական և այլ փաստաթղթերը ուղարկվում են սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:»:

Հոդված 33. Օրենքի 93-րդ հոդվածի 6-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 34. Օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ֆիզիկական անձի առողջացման ծրագիրը ներկայացնելու, հաստատելու հետ կապված հարաբերությունների նկատմամբ տարածվում են իրավաբանական անձանց համար սույն օրենքով սահմանված իրավակարգավորումները, եթե այլ բան սահմանված չէ սույն հոդվածով: Ֆիզիկական անձի առողջացման ծրագրում կարող է օգտագործվել նաև պարտապանի աշխատավարձի այն մասը, որի վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բռնագանձում տարածվել:»:

Հոդված 35. Օրենքի 95-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «վաճառքի» բառից հետո լրացնել «(բռնագանձման)» բառը, «բացառությամբ» բառից հետո լրացնել «պարտապանի աշխատավարձի ու դրան հավասարեցված այլ վճարումների,» բառերը, իսկ «դրան» բառը փոխարինել «սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուն» բառերով.

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Պարտապանի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների գանձումն իրականացվում է հաշվի առնելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 6–րդ գլխով սահմանված կարգավորումները և սնանկության վարույթի առանձնահատկությունները: Սույն մասի գործողությունը տարածվում է ինչպես մինչև սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահը վճարված աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարներից կատարվող գանձումների վրա, այնպես էլ պարտապանի՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ստացվող աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարներից կատարվող գանձումների վրա:».

3) լրացնել նոր 3.1-ին, 3.2-րդ և 3.3-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Ֆինանսական առողջացման ծրագիր հաստատված չլինելու կամ դադարեցվելու դեպքում, սնանկության վարույթի ցանկացած փուլում դատարանը՝ կառավարչի դիմումի հիման վրա, առանց դատական նիստ հրավիրելու կայացնում է որոշում՝ պարտապանի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների բռնագանձման ենթակա մասից գանձումներ կատարելու վերաբերյալ: Դատարանը մերժում է կառավարչի դիմումը, եթե, հաշվի առնելով պարտատերերի պահանջների չափը, գտնում է, որ պարտապանի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների չափը այնքան փոքրարժեք է, որ ողջամիտ չէ դրա նկատմամբ բռնագանձում տարածելը, ներառյալ, եթե՝

1) աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները չեն գերազանցում նվազագույն աշխատավարձի 150-ապատիկը կամ

2) աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների բռնագանձմամբ պարտատերերի պահանջները չեն բավարարվելու մինչև 48 ամսվա ընթացքում:

3.2. Սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված դատարանի որոշումը կառավարիչը ստանալուց հետո եռօրյա ժամկետում ուղարկում է պարտապանի գործատուին: Դատարանի որոշումը հիմք է գանձման ենթակա գումարը գործատուի կողմից պարտապանի սնանկության հատուկ հաշվին փոխանցելու համար:

3.3. Դատարանի կողմից կառավարչի դիմումը մերժելը արգելք չէ կառավարչի կողմից կրկին դատարան դիմելու, եթե մինչև սնանկության գործի ավարտը կառավարչին հայտնի է դարձել պարտապանի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների անհրաժեշտ չափով աճի մասին: Սույն մասով նախատեսված կարգով կրկին դիմելու դեպքում դատարանը դիմումը քննում է սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված կարգով:»:

Հոդված 36. Օրենքի 97-րդ հոդվածի «ա» կետում «երկրորդ մասով» բառերը փոխարինել «չորրորդ մասով» բառերով:

Հոդված 37. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված սնանկության դիմումների վրա:

3. Սույն օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ կետը ուժի մեջ է մտնում հրապարակային սակարկությունների համար նախատեսված էլեկտրոնային կայքի գործարկման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հայտարարության հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

4. Սույն օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ կետն ուժի մեջ մտնելուց հետո բոլոր սնանկության գործերով (անկախ սնանկության վարույթը հարուցվելու պահից) առաջին (հերթական) աճուրդները կազմակերպվում և անցկացվում են հրապարակային սակարկությունների համար նախատեսված էլեկտրոնային կայքի

միջոցով (էլեկտրոնային աճուրդով)՝ Օրենքի 76-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված կարգով, իսկ աճուրդները, որոնց մասին հայտարարությունները հրապարակվել են մինչև սույն օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ կետն ուժի մեջ մտնելը, անցկացվում են այդ հայտարարությունները հրապարակելու պահին գործող կարգով:

5. Սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները ուժի մեջ են մտնում Բարձրագույն դատական խորհրդի՝ էլեկտրոնային համակարգի գործարկման մասին հայտարարության հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

6. Սույն օրենքի 34-րդ և 35-րդ հոդվածներով նախատեսված կարգավորումները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված սնանկության գործերի վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սնանկության մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Պարտապանի կողմից սեփական սնանկությունը ճանաչելու կամ սնանկության վտանգի դիմում ներկայացնելու դեպքում պարտապանը դիմումին կից պարտավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1) հիմնավորումներ պարտատերերի պահանջների ամբողջ ծավալով բավարարման անհնարինության կամ տնտեսական գործունեության էական վատթարացման վերաբերյալ, որոնք հիմք են հանդիսացել սնանկության դիմում ներկայացնելու համար.

2) պարտապանի պարտատերերի և պարտապանների (այդ թվում՝ այն քաղաքացիների, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար) ցուցակը, նրանց անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը և առանձին պարտավորությունների, ներառյալ՝ արտահաշվեկշռային պարտավորությունների բնույթը, չափը և հիմքերը: Նշված տեղեկությունները պետք է ներառեն նաև այն պարտավորությունները, որոնց ժամկետը չի լրացել, ինչպես նաև պարտապանի տված երաշխիքները և ստանձնած այլ պարտավորությունները.

3) եթե պարտապանը անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ է, ապա պարտապանի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները.

4) եթե պարտապանը տնտեսական ընկերակցություն է, ապա մասնակիցների (լիակատար ընկերների) անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը և պետական գրանցման տվյալները.

5) պարտապանի հայտարարությունը՝ ֆինանսական առողջացման մտադրության մասին.

6) դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 90 օրից ոչ ավելի վաղեմություն ունեցող տեղեկություններ (ապացույցներ) պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի և այլ գույքային իրավունքների առկայության կամ բացակայության մասին, այդ թվում նաև՝ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված գույքային իրավունքների առկայության կամ բացակայության մասին՝ ստացված անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքի (իրավունքների) պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններից, իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնից, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունից, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունից, ~~Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունից,~~ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերությունից, Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերից, Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից՝ պարտավորության կատարման վերաբերյալ կատարողական վարույթ հարուցված լինելու դեպքում, պարտապանի անշարժ գույքի գտնվելու, շարժական գույքի հաշվառման, իսկ անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ հանդիսացող պարտապանի դեպքում նաև վերջիններիս գործունեության իրականացման վայրի տեղական ինքնակառավարման մարմնից.

7) եթե պարտապանը ֆիզիկական անձ է՝ հարկային մարմնի կողմից փաստաթղթային տեսքով տրված ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքը.

8) կամավոր սնանկության կամ սնանկության վտանգի մասին դատարան ներկայացվող դիմումի և կից փաստաթղթերի պատճենները բոլոր պարտատերերին ուղարկելու մասին ապացույցները.

9) սնանկության վտանգի դիմումի դեպքում՝ սույն օրենքի պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական առողջացման ծրագիրը:»:

Հոդված 2. Օրենքի 15.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «, և փակցնել դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում» կետադրական նշանը և բառերը հանել:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ պարբերությունում «2-րդ կետով» բառերը փոխարինել «1-ին կետով» բառերով.

2) լրացնել նոր 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Պարտապանի գրավոր առարկությունը պետք է պարունակի ներկայացված պահանջի դեմ մասնակի կամ ամբողջությամբ առարկելու մասին դիրքորոշում, առկայության դեպքում պետք է վկայակոչվեն առարկությունների հիմքում դրված փաստերը և կից ներկայացվեն այն ապացույցները, որոնք հաստատում են առարկությունների հիմքում դրված փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե որ ապացույցն ինչ փաստի հաստատմանն է ուղղված: Պարտապանն իրավունք ունի մինչև դատական նիստը կամ դատական նիստի ընթացքում լրացնել առարկությունը կամ ներկայացնել լրացուցիչ ապացույցներ, եթե հիմնավորում է դրանք առարկությամբ ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող առարկությունը դատարանի կողմից ենթակա չէ քննարկման:»:

Հոդված 4. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «բ» կետում լրացնել նոր՝ երրորդ նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Կառավարչի կողմից պարտատերերի առաջին ժողովի անցկացման վայրի վերաբերյալ միջնորդություն ներկայացված լինելու դեպքում ժողովը նշանակվում է այդ միջնորդությամբ նշված վայրում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում:»,

2) 1-ին մասի «դ» կետում հանել «և փակցնել դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում» բառերը:

Հոդված 5. Օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Սնանկության գործի վարույթը կարճվելու, սնանկության դիմումը մերժվելու, ինչպես նաև ժամանակավոր կառավարչի՝ կառավարիչ չնշանակվելու դեպքերում ժամանակավոր կառավարչի վարձատրությունը կատարվում է միանվագ կարգով՝ դատարանի կողմից համապատասխան վճիռը (որոշումը) կայացնելուց հետո՝ դրան նախորդող վերջին մեկ տարում համապատասխանաբար պարտապանի տնօրենի համար հաշվարկված ամսական միջին աշխատավարձի կամ ֆիզիկական անձ պարտապանի ամսական միջին եկամտի 1/12-ի և որպես ժամանակավոր կառավարիչ փաստացի աշխատած ամիսների արտադրյալի չափով: Այն դեպքում, երբ ֆիզիկական անձ պարտապանը՝ վերջին մեկ ամսվա ընթացքում եկամուտ չի ունեցել, ապա ժամանակավոր կառավարչի վարձատրությունը կատարվում է միանվագ կարգով՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի 1/12-ի և որպես ժամանակավոր կառավարիչ փաստացի աշխատած ամիսների արտադրյալի չափով:»:

Հոդված 6. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել նոր՝ «թ. 1» կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«թ. 1) իր կողմից վարվող բոլոր գործերով կազմակերպվող էլեկտրոնային աճուրդների մասնակիցներից գանձման ենթակա գումարները հավաքագրելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերից մեկում իր անունով բացում է մեկ դրամային հաշիվ, որը ունի սնանկության հատուկ հաշվի կարգավիճակ, և աճուրդի ավարտից հետո յուրաքանչյուր գույքի մասով մուտքագրված գումարները փոխանցում է այդ գույքի վերաբերյալ համապատասխան սնանկության գործով բացված սնանկության հատուկ հաշվեհամարին:».

2) 1-ին մասի «ժ» և «ժ.1» կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ժ) պարտապանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դատարանի որոշման հիման վրա արգելանք է դնում կամ հանում արգելանքը, որի դեպքում դրա հիման վրա կազմված կատարողական թերթն անհապաղ ուղարկվում է հարկադիր կատարման.

ժ.1) միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պարտապանի գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին՝ կցելով գույքի հայտնաբերման անհնարինության հիմքերը, որի բավարարման դեպքում դրա հիման վրա կազմված կատարողական թերթն անհապաղ ուղարկվում է հարկադիր կատարման.».

3) 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել»:

Հոդված 8. Օրենքի 29.1-ին հոդվածում՝

1) 1-ին մասում «ժամկետով, բայց ոչ ավելի, քան հինգ տարի ժամկետով» բառերը փոխարինել «ողջ ժամկետի ընթացքում» բառերով.

2) 1-ին մասում լրացնել նոր 1.1-ին կետ.

«1.1) հանրային ծառայող է՝ հանրային ծառայության մեջ գտնվելու ողջ ժամկետի ընթացքում.».

~~2~~3) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-3-րդ և 5-9-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության մասին կառավարիչը պարտավոր է տասնօրյա ժամկետում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը և կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությանը՝ կցելով կասեցման հիմքերը հավաստող համապատասխան փաստաթղթերը: Սույն հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով նախատեսված հիմքով կառավարչի գործունեությունը կասեցվում է, եթե կառավարիչը որակավորման վկայական ստանալուց հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն չի ներկայացնում կասեցման հիմքը վերանալը հավաստող համապատասխան փաստաթղթեր:»:

Հոդված 9. Օրենքի 29.2-ին հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում «1-3-րդ կետերով» բառերը և թվերը փոխարինել «2-3-րդ կետերով» բառերով և թվերով:

Հոդված 10. Օրենքի 30-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «՝ չներառելով գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունների գումարը» կետադրական նշանը և բառերը հանել.

2) 2-րդ մասում «դատական ակտով՝» բառերը և կետադրական նշանը հանել:

Հոդված 11. Օրենքի 32-րդ հոդվածում լրացնել նոր 4-րդ մաս.

«4. Դատարանն իր նախաձեռնությամբ վաղաժամկետ դադարեցնում է նոր նշանակված կառավարչի լիազորությունները, եթե սույն հոդվածի հիմքով ավելի շուտ նշանակված կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ որոշումը բողոքարկման արդյունքում վերացվել է:»:

Հոդված 12. Օրենքի 33-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երրորդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ մասում առաջին նախադասությունից առաջ լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ժողովը անցկացվում է առկա եղանակով՝ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց մեկ վայրում հավաքվելու միջոցով, կամ հեռավար՝ էլեկտրոնային կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ էլեկտրոնային համակարգի միջոցով, կամ գրավոր հարցումների եղանակով:».

3) 3-րդ մասում առաջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Այն դեպքում, երբ պարտատերերի ժողովը հեռավար եղանակով անցկացնելու վերաբերյալ ներկայացվում է առարկություն, ապա ժողովն անցկացվում է առկա եղանակով:

Հեռավար՝ էլեկտրոնային կապի այլ միջոցների օգտագործմամբ, ժողովի արձանագրությունը և դրանց կից ներկայացվող փաստաթղթերը կարող են կազմվել և ներկայացվել էլեկտրոնային տարբերակով: Ժողովի մասնակիցների կողմից ստորագրման ենթակա փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային ստորագրության առկայությամբ, իսկ այլ փաստաթղթերը՝ սկանավորված տարբերակով:».

4) 9-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13. Օրենքի 34-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ նախադասությունում «օգտագործմամբ» բառից հետո լրացնել «կամ էլեկտրոնային համակարգի միջոցով» բառերը:

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Առկա ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

ա) պարտապանի անվանումը (անունը) և գտնվելու (բնակության) վայրը.

բ) սնանկության գործի համարը.

գ) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամանակը և վայրը.

դ) ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը, քվեարկության դրվող հարցերի բովանդակությունները.

ե) ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին ծանոթանալու կարգը.

զ) ժողովի մասնակիցների գրանցման կարգը:»:

3) լրացնել նոր 4-րդ և 5-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Էլեկտրոնային կապի այլ միջոցների կիրառմամբ հեռավար ժողովի անցկացման մասին ծանուցումը պետք է պարունակի՝

ա) պարտապանի անվանումը (անունը) և գտնվելու (բնակության) վայրը.

բ) սնանկության գործի համարը.

գ) պարտատերերի հաշվառման կարգը և վերջնաժամկետը (միայն առաջին ժողովի դեպքում).

դ) ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը, քվեարկության դրվող հարցերի բովանդակությունները.

ե) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամանակը:

5. Գրավոր հարցումների եղանակով անցկացվող ժողովի վերաբերյալ ծանուցումը, բացի սույն հոդվածի 4-րդ մասի «ա»-«դ» կետերում նշված պահանջների, պետք է պարունակի նաև օրակարգի հարցերին առնչվող նյութերը և քվեաթերթիկը, որի վրա պետք է նշված լինի լրացված քվեաթերթիկները կառավարչին ուղարկելու կարգը և վերջնաժամկետը:»:

Հոդված 14. Օրենքի 37-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 37. Քվեարկության քվեաթերթիկը**

1. Ժողովում քվեարկությունն իրականացվում է քվեաթերթիկների միջոցով:

2. Քվեաթերթիկները կազմում է կառավարիչը:

3. Քվեաթերթիկը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

ա) պարտապանի անվանումը (անունը) և սնանկության գործի համարը,

բ) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամանակը և վայրը (առկա ժողովի դեպքում).

գ) քվեարկության դրված հարցերի բովանդակությունները, քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ «կողմ», «դեմ».

դ) ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրի պարտատերը.

ե) քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը,

զ) քվեաթերթիկը կառավարչին ուղարկելու կարգը և վերջնաժամկետը:

4. Ժողովներում քվեարկությունների անցկացման և կազմակերպման կարգը որոշվում է ժողովի կանոնակարգով:»:

Հոդված 15. Օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասում լրացնել նոր երկրորդ նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Նիստն անցկացվում է առկա եղանակով՝ խորհրդի անդամների մեկ վայրում հավաքվելու միջոցով, կամ հեռավար՝ էլեկտրոնային կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ էլեկտրոնային համակարգի միջոցով: Խորհրդի անդամները խորհրդի նիստի մասին պատշաճ ծանուցվում են սույն օրենքով սահմանված կարգով՝ նիստից առնվազն երեք օր առաջ:»:

Հոդված 16. Օրենքի 39.1-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «մերժվելու» բառից առաջ լրացնել «39.2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի հիմքով» բառերը.

2) լրացնել նոր 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Սույն հոդվածով նախատեսված դիմումը ներկայացնելու ժամկետի ավարտից հետո ներկայացվելու և ժամկետի բացթողումը հարգելի ճանաչվելու դեպքերում քննարկվում է դատարանի կողմից՝ սույն օրենքի 39.2-րդ հոդվածով սահմանված կարգով:»:

Հոդված 17. Օրենքի 39.2-րդ հոդվածի 5-րդ մասում լրացնել նոր 4-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) դիմումը ներկայացվել է 39.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի ավարտից հետո և չի ներկայացվել ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու մասին միջնորդություն կամ ներկայացված միջնորդությունը մերժվել է:»:

Հոդված 18. Օրենքի 42-րդ հոդվածի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Կառավարիչն իր կողմից վարվող գրանցամատյանում հաշվառում է պարտապանի նկատմամբ ներկայացված պահանջների չափերը, առաջնահերթությունը, պահանջների փոփոխությունները:»:

Հոդված 19. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասում «ձեռք է բերում քվեարկության ձայնի իրավունք» բառերը փոխարինել «ձեռք է բերում պարտապանին պատկանող իր համապատասխան պարտավորության համար չապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցների բաշխմանը մասնակցելու իրավունք» բառերով:

Հոդված 20. Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասում «կասեցումը» բառից հետո լրացնել «, որից հետո համարվում են լուծված» կետադրական նշանը և բառերը:

Հոդված 21. Օրենքի 46-րդ հոդվածում՝

1) 2.1-ին մասում լրացնել նոր երկրորդ և երրորդ նախադասություններ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Դատարանը թերությունները վերացնելու համար սահմանում է մինչև եռօրյա ժամկետ: Թերությունները վերացվելու և դատարանի կողմից սահմանված ժամկետում պահանջը դատարան կրկին ներկայացվելու դեպքում համարվում է ժամկետում ներկայացված:».

2) 5-րդ մասում «առաջին մասով» բառերը փոխարինել «1-ին կամ 2.1-ին մասերով» թվերով և բառերով.

3) 6-րդ մասում «Պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում,» բառերից հետո լրացնել «իսկ դատարանի կողմից թերությունների վերացման համար ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ այդ ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում,» բառերը.

4) 9-րդ մասում՝

ա) «Պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումից հետո» բառերը փոխարինել «Պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո» բառերով.

բ) «սույն օրենքի 85-րդ հոդվածին համապատասխան» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո առաջացած պահանջների մասով, որոնց առաջնահերթությունը սահմանված է օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը.

5) 10-րդ մասում «ապահովվածությունը» բառից հետո լրացնել «, ըստ անհրաժեշտության փոփոխություն կատարելով պահանջի վերաբերյալ կայացված դատական ակտում» բառերը:

Հոդված 22. Օրենքի 60-րդ հոդվածում լրացնել նոր 1.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Ֆինանսական առողջացման ծրագրին կից դատարան է ներկայացվում ֆինանսական առողջացման ծրագրի օրինակը կառավարչին ուղարկված լինելու վերաբերյալ ապացույցը (բացառությամբ ծրագիրը կառավարչի կողմից ներկայացվելու դեպքերի):»:

Հոդված 23. Օրենքի 62-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 62. Ֆինանսական առողջացման ծրագրի քննարկումը

1. Ֆինանսական առողջացման ծրագիրն ստանալուց հետո՝ երկու օրվա ընթացքում, դատարանը որոշում է ընդունում ֆինանսական առողջացման ծրագիրն վերադարձնելու մասին, եթե այն չի համապատասխանում սույն օրենքով սահմանված պահանջներին կամ չի ներկայացվել ֆինանսական առողջացման ծրագրի օրինակը

կառավարչին ուղարկված լինելու վերաբերյալ ապացույցը (բացառությամբ ծրագիրը կառավարչի կողմից ներկայացվելու դեպքերի): Դատարանը որոշմամբ նշում է առկա թերությունները և սահմանում է եռօրյա ժամկետ՝ առկա թերությունները շտկելու և ֆինանսական առողջացման ծրագիրը կրկին ներկայացնելու համար: Մինչև որոշում ընդունելը դատարանը կարող է ծրագիր ներկայացնող անձից պահանջել ներկայացնել ծրագրի վերաբերյալ փորձագետի եզրակացություն:

2. Ֆինանսական առողջացման ծրագիրը վերադարձնելու մասին որոշումը ստանալուց հետո սահմանված ժամկետում թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում համարվում է ժամկետում ներկայացված:

3. Դատարանը երկօրյա ժամկետում որոշում է կայացնում ֆինանսական առողջացման ծրագիրն առանց քննության թողնելու մասին, եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով ֆինանսական առողջացման ծրագիրը վերադարձվելու դեպքում սահմանված ժամկետում թերությունները չեն վերացվել կամ կրկին ներկայացվելու դեպքում թույլ են տրվել նոր խախտումներ:

4. Եթե ֆինանսական առողջացման ծրագիրն ստանալուց կամ ֆինանսական առողջացման ծրագիրը վերադարձվելու դեպքում կրկին ներկայացվելուց հետո՝ երկօրյա ժամկետում, դատարանը որոշում չի ընդունել ֆինանսական առողջացման ծրագիրն վերադարձնելու կամ առանց քննության թողնելու մասին, ապա կառավարչին, պարտապանին և իրեն հայտնի բոլոր պարտատերերին ծանուցում է դատարանում ֆինանսական առողջացման ծրագրի առկայության և ծրագրին նրանց ծանոթանալու իրավունքի մասին:

5. Կառավարիչը ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու՝ սույն օրենքով կամ երկարաձգման մասին դատարանի որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո ոչ ուշ, քան 20 օրվա ընթացքում հրավիրում է ժողով ֆինանսական առողջացման ծրագիրը (ծրագրերը) քննարկելու նպատակով, որին հրավիրվում է պարտապանը:»:

Հոդված 24. Օրենքի 73-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 73. Պարտապանի գործունեության վերսկսումը**

1. Եթե պարտապանի գործունեությունը կասեցվել է սույն օրենքի 72-րդ հոդվածով նախատեսված կարգով, ապա կառավարչի միջնորդության հիման վրա կայացված դատարանի որոշմամբ պարտապանը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն վերսկսել իր գործունեությունը մինչև մեկ տարի ժամանակով, եթե պարտապանի գործունեության վերսկսումը կարող է ավելացնել պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունը: Կառավարչի միջնորդության հիման վրա դատարանը որոշում է կայացնում պարտապանի գործունեությունը մասնակի կամ ամբողջությամբ վերսկսելու մասին, որի վերաբերյալ բոլոր պարտատերերը պատշաճ կերպով ծանուցվում են որոշումը կայացնելու պահից եռօրյա ժամկետում:

2. Եթե դատարանի՝ պարտապանի գործունեությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն վերսկսելու վերաբերյալ որոշումը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, պարտատերերից որևէ մեկը գրավոր առարկություն է ներկայացնում դատարան, ապա կառավարիչը հրավիրում է խորհրդի նիստ, իսկ վերջինի ձևավորված չլինելու դեպքում ժողով՝ քննարկման դնելով այդ հարցը: Խորհրդի կամ ժողովի որոշումը և նիստի արձանագրությունը կառավարիչը ներկայացնում է դատարան:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում ~~դատավորն~~ դատարանն առանց դատական նիստ հրավիրելու որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ այն մերժելու մասին: ~~Դատավորի~~ Դատարանի որոշումը եռօրյա ժամկետում կառավարիչն ուղարկում է պարտատերերին և հարկային համապատասխան մարմնին: Դատարանի որոշումը կարող է բողոքարկվել:

4. Պարտապանի գործունեությունը ժողովի որոշման և կառավարչի միջնորդության հիման վրա կայացված դատարանի որոշմամբ կարող է երկարաձգվել, եթե պարտապանի վերսկսված գործունեությունը ավելացրել է պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունը: Այդ դեպքում պարտապանի գործունեության երկարաձգման ժամկետը չի կարող գերազանցել ընդհանուր 36 ամիսը:

5. Պարտապանի գործունեությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն վերսկսելը արգելք չի հանդիսանում պարտապանի գույքի հաշվին պահանջի բավարարման գործընթացը իրականացնելու համար, այդ թվում սույն օրենքի 75-րդ, 76-րդ և 77-րդ հոդվածներով նախատեսված իրավակարգավորումներով, բացառությամբ այն գույքի, որն օգտագործվում է պարտապանի վերսկսված գործունեությունը ապահովելու համար:»:

Հոդված 25. Օրենքի 75-րդ հոդվածի 1. 1-ին մասում «կառավարիչն իրավունք ունի դիմելու դատարան և պահանջելու» բառերը փոխարինել «կառավարիչը դիմում է դատարան՝ միջնորդելով» բառերով:

Հոդված 26. Օրենքի 76-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «, աճուրդի անցկացման օրը» կետադրական նշանը և բառերը.

2) 2-րդ մասում լրացնել նոր՝ չորրորդ և հինգերորդ նախադասություններ՝ հետևյալ բովանդակությամբ. «Եթե առաջարկվող ամենաբարձր մեկնարկային գնով հայտարարված աճուրդը չի կայանում, ապա գույքը վաճառքի է ներկայացվում հաջորդ՝ ամենաբարձր մեկնարկային գնով, և այս կարգով աճուրդներ են կազմակերպվում այնքան ժամանակ, քանի դեռ գույքը վաճառքի չի ներկայացվել ամենացածր մեկնարկային գինը ներառող առարկությամբ առաջարկված մեկնարկային գնով: Եթե պարտապանի գույքը առարկություն ներկայացրած պարտատիրոջ առաջարկած գնով աճուրդի ներկայացվելու դեպքում չի վաճառվել, ապա այդ պարտատիրոջ վճարած դեպոզիտի գումարը չի վերադարձվում:».

3) 3-րդ մասի «բ» կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «բ) գույքի վաճառքը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով թույլատրելու, գույքն այդ կարգով չվաճառվելու դեպքում այն կառավարչի միջնորդությամբ սահմանված կարգով վաճառելու մասին, եթե սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան ներկայացվել է առնվազն մեկ առարկություն.».

4) 4-րդ մասի առաջին պարբերությունում հանել երկրորդ նախադասությունը, իսկ երկրորդ պարբերությունում «շուկայական գների կտրուկ փոփոխություն» բառերից հետո լրացնել «, կամ եթե ապահովված պարտատերը կամ գրավատուն օրենքով սահմանված կարգով օգտվել են սույն օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ կամ 10-րդ մասերով սահմանված իրենց իրավունքներից, կամ եթե դատարանի որոշմամբ հրապարակային սակարկություններով վաճառքի ենթակա գույքի վերաբերյալ դատարանը կայացնում է ուղղակի վաճառքով վաճառելու թույլտվություն տալու մասին որոշում, կամ սույն օրենքով սահմանված կարգով տվյալ գույքը ենթակա է իրացման այլ սնանկության վարույթի շրջանակներում» բառերը.

5) 5-րդ մասում հանել «, որը փակցվում է նաև դատարանի շենքում՝ հատուկ հատկացված տեղում» բառերը.

6) լրացնել նոր՝ 9.1-ին և 9.2-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.1. Սնանկության գործով հրապարակային սակարկություններին չեն կարող մասնակցել՝

1) սակարկությունների կազմակերպիչ կառավարիչը,

2) սակարկությունների կազմակերպիչ կառավարչի երեխաները, ծնողները, ամուսինը, տատը, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև սակարկությունների կազմակերպիչ կառավարչի ամուսնու ծնողները, տատը, պապը, եղբայրները և քույրերը,

3) այն անձինք, որոնք սակարկություններով վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

9.2. Սակարկությունների արդյունքում վաճառված գույքի առուվաճառքի պայմանագրեր կնքելիս պայմանագրերի էական պայմանները պետք է համապատասխանեն սակարկությունների մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված պայմաններին:»:

7) լրացնել նոր՝ 11-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«11. Սնանկության վարույթում կազմակերպված էլեկտրոնային աճուրդը կարող է անվավեր ճանաչվել միայն շահագրգիռ անձի հայցով՝ դատական կարգով, եթե աճուրդն անց է կացվել սույն հոդվածի 9.1-ին և 9.2-րդ մասերով սահմանված

պահանջների կամ սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգում որպես էական նշված պայմանների խախտումներով: Ընդ որում, սույն հոդվածի 9.1-ին մասի 3-րդ կետով սահմանված դեպքում աճուրդը կարող է անվավեր ճանաչվել, եթե սակարկությունների արդյունքում հաղթող է ճանաչվել այն անձը, որը սակարկություններով վաճառվող լոտի նկատմամբ չէր կարող ունենալ սեփականության իրավունք:»:

Հոդված 27. Օրենքի 77-րդ հոդվածում լրացնել նոր՝ 1.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Կառավարիչը պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող՝ գրավի առարկա չհանդիսացող գույքում պարտապանի բաժինը այդ գույքի շուկայական գնահատված գնի՝ պարտապանի բաժնին համապատասխան արժեքով գնելու վերաբերյալ ծանուցում է ուղարկում այդ գույքի համասեփականատերերին:

Եթե գույքի բոլոր համասեփականատերերը կառավարչին են ներկայացնում պարտապանի բաժինը առաջարկված գնով բոլոր համասեփականատերերի կամ իրենցից մեկի կամ մի քանիսի կողմից գնելու վերաբերյալ համաձայնություն, և ապացույց՝ կառավարչի առաջարկած վաճառքի գնի չափով գումարը սնանկության հատուկ հաշվեհամարին մուտքագրված լինելու վերաբերյալ, ապա կառավարիչը այդ մասին տեղեկացնում է պարտապանին և պարտատերերին և դատարան է ներկայացնում գույքում պարտապանի բաժինը համասեփականատիրոջը (համասեփականատերերին) ուղղակի վաճառքով վաճառելու թույլտվություն ստանալու մասին միջնորդություն:

Եթե պարտապանի բաժինը առաջարկված գնով գնելու ցանկություն հայտնում են ոչ բոլոր համասեփականատերերը, համաձայնությանը կից ներկայացնելով ապացույց՝ կառավարչի առաջարկած վաճառքի գնի չափով գումարը սնանկության հատուկ հաշվեհամարին մուտքագրված լինելու վերաբերյալ, ապա գույքում պարտապանի բաժինը ուղղակի վաճառքով վաճառելու թույլտվություն ստանալու մասին միջնորդությունը դատարան կարող է ներկայացվել միայն գույքում

պարտապանի բաժինը գնելու վերաբերյալ համասեփականատերերի ծանուցվելուց մեկ ամիսը լրանալուց հետո:

Միջնորդությանը կից դատարան է ներկայացվում գույքի գնահատման ակտը (անկախ գնահատողի կողմից գնահատված լինելու դեպքում՝ եզրակացությունը), կառավարչի կողմից համասեփականատերերին ուղղված ծանուցումը, վերջիններիս կողմից ծանուցված լինելու ապացույցները, գնելու ցանկություն հայտնած համասեփականատիրոջ (համասեփականատերերի) անձնագրերի պատճենները, համասեփականատերերի առկա համաձայնությունները, սնանկության հատուկ հաշվեհամարին ծանուցմամբ նշված գումարի վճարված լինելու ապացույցը, միջնորդությունը դատարան ներկայացնելու մասին պարտապանին և պարտատերերին ծանուցման ապացույցները:

Դատարանը միջնորդությունն ստանալու օրվանից մեկշաբաթյա ժամկետում կայացնում է միջնորդությունը բավարարելու և ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքում պարտապանի բաժինը գույքի համասեփականատիրոջը (համասեփականատերերին) ուղղակի վաճառքով վաճառելու թույլտվություն տալու մասին որոշում, եթե միջնորդությունը ներկայացվել է սույն մասին համապատասխան:

Եթե պարտապանի բաժինը առաջարկված գնով գնելու մասին ~~ծանուցումն~~ ծանուցվելու ~~ստանալու (սույն օրենքով սահմանված կարգով՝ ծանուցված համարվելու)~~ օրվանից հետո մեկամսյա ժամկետում գույքի համասեփականատերերը կամ նրանցից առնվազն մեկը ցանկություն չեն հայտնում պարտապանի բաժինը գնելու վերաբերյալ, կամ չեն ներկայացնում ապացույց՝ կառավարչի առաջարկած վաճառքի գնի չափով գումարը սնանկության հատուկ հաշվեհամարին մուտքագրված լինելու վերաբերյալ, ապա կառավարիչը հայցադիմում է ներկայացնում սնանկության գործը վարող դատարան՝ գույքում պարտապանի բաժինն առանձնացնելու, առանձնացման անհնարինության դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և վաճառքից ստացված գումարը համասեփականատերերի միջև իրենց բաժիններին համապատասխան բաշխելու պահանջի մասին:

Անբաժանելի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին դատարանի վճիռը հիմք է գույքը կառավարչի կողմից հրապարակային սակարկություններով վաճառելու համար:»:

Հոդված 28. Օրենքի 77. 1-ին հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Կառավարչի կողմից վտարման կամ գույքը կառավարչին հանձնելու պահանջ ներկայացնելը**»

2) լրացնել նոր 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Կառավարիչը կարող է միջնորդությամբ դիմել դատարան, խնդրելով պարտավորեցնել պարտապանին կամ երրորդ անձին (եթե գույքը տիրապետվում է այլ անձի կողմից՝ փաստացի տիրապետողին)՝ իրենց պատկանող կամ ապահովված իրավունքի առարկա հանդիսացող (իրենց կողմից փաստացի տիրապետվող) շարժական գույք հանձնել կառավարչին, եթե վերջիններս չեն տրամադրում գույքը կամ խոչընդոտում են գույքագրման աշխատանքներին, աճուրդի մասնակցնի կողմից զննություն իրականացնելուն, չեն տրամադրում կամ խոչընդոտում են գույքի փոխանցումը աճուրդում հաղթած անձին, ինչպես նաև գույքը վերջիններիս տիապետության տակ թողնելը կարող է վատթարացնել գույքի փաստացի վիճակը կամ նվազեցնել գույքի արժեքը:

Միջնորդությունը պետք է պարունակի գույքը կառավարչին հանձնելու պահանջի հիմնավորումը, ինչպես նաև միջնորդության պատճենը այդ անձանց ուղարկելու մասին ապացույցները:

Միջնորդության պատճենն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, այդ անձինք կարող են միջնորդության կապակցությամբ առարկություններ ներկայացնել դատարան: Կառավարչի պահանջը լուծվում է առանց դատական նիստ հրավիրելու՝ դատարանի որոշմամբ: Միջնորդության բավարարման դեպքում դատարանի որոշման հիման վրա կազմված կատարողական թերթն ուղարկվում է հարկադիր կատարման:»:

Հոդված 29. Օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետում «պարտավորությունները» բառից հետո լրացնել «սնանկ ճանաչված պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնված կամ պարտապանին այլ սնանկության գործով սնանկ ճանաչելու հիմքով՝ կարճված կամ ավարտված գործով դատական ծախսերի գումարը» բառերը:

Հոդված 30. Օրենքի 85-րդ հոդվածի 2.1-ին մասում 2-րդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պահանջները սահմանված ժամկետներում հարգելի պատճառներով չներկայացրած պարտատերերի պահանջները ընդգրկվում են տվյալ պահանջին համապատասխանող հերթում՝ համապատասխան փոփոխություն կատարելով պահանջների ցուցակում:»:

Հոդված 31. Օրենքի 90-րդ հոդվածում լրացնել նոր՝ 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Սույն օրենքի 67-րդ հոդվածի առաջին մասով, 69-րդ հոդվածի չորրորդ մասի «ա» կետով, ինչպես նաև 74-րդ և 89-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում սնանկության վերաբերյալ գործի ավարտի դեպքում դատարանը վճիռն ուղարկում է նաև կենտրոնական բանկին՝ Հայաստանի Հանրապետության բանկերին և այլ վարկային կազմակերպություններին և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիային, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային բյուրոներին ծանուցելու համար:»:

Հոդված 32. Օրենքում լրացնել նոր 10.1-ին գլուխ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**ԳԼՈՒԽ 10.1**

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 90.1. Սույն գլխի գործողության ոլորտը

1. Սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) միջոցով դատարանի, սնանկության գործով կառավարիչների, պարտապանի, պարտատերերի, ինչպես նաև սնանկության վարույթով շահագրգիռ այլ անձանց (որոնց իրավունքներին ու օրինական շահերին առնչվում կամ կարող է առնչվել սնանկության վարույթը, այդ թվում՝ գրավատու, երաշխավոր, երաշխիք տված անձ և այլն) կողմից իրականացվող գործողությունների վրա:

2. Դատարանը, սնանկության գործով կառավարիչները, պարտապանը, պարտատերերը, ինչպես նաև սնանկության վարույթով շահագրգիռ այլ անձինք սնանկության գործերի հետ կապված էլեկտրոնային համակարգից օգտվում են սույն օրենքով սահմանված կարգով, իսկ սույն օրենքով կարգավորված չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ դատարանի և դատավարության մասնակիցների համար սահմանված կարգով:

3. Էլեկտրոնային համակարգի միջոցով պատշաճ կերպով և էլեկտրոնային համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին համապատասխան կատարված գործողությունն առաջացնում է նույն հետևանքները, ինչ կառաջացներ սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով իրականացված համանման գործողությունը:

4. Էլեկտրոնային համակարգի միջոցով չեն կարող կատարվել այնպիսի գործողություններ, որոնց կատարումը էլեկտրոնային համակարգի միջոցով տեխնիկական տեսանկյունից անհնարին է: Նման անհնարինությունը չի կարող գնահատվել որպես անձի դատավարական իրավունքների սահմանափակում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան գործողությունը կարող է կատարվել սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

5. Պարտապանի գույքի վերաբերյալ էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացված հարցման՝ էլեկտրոնային համակարգի կողմից հավաստված պատասխանը հավասարեցվում է տեղեկությունը տնօրինող համապատասխան մարմնից ստացված պատասխանին:

Հոդված 90.2. Սույն գլխում օգտագործվող հասկացությունները

1. Սույն գլխի իմաստով էլեկտրոնային համակարգն օգտագործող անձ է համարվում այն ֆիզիկական անձը՝

1) ով սնանկության գործի շրջանակներում առնվազն մեկ անգամ էլեկտրոնային համակարգի միջոցով կատարել է որևէ գործողություն կամ սնանկության գործով կառավարչին ուղղված դիմումի հիման վրա գրանցվել է էլեկտրոնային համակարգում և

2) հետագայում գործը քննող դատարանին չի միջնորդել էլեկտրոնային համակարգից օգտվելու անհնարինության մասին:

2. Սույն գլխի իմաստով, իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները համարվում են համակարգն օգտագործող անձինք՝ անկախ էլեկտրոնային համակարգի միջոցով առնվազն մեկ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց:

3. Էլեկտրոնային համակարգին առնչվող այլ հասկացությունները օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իմաստով:

Հոդված 90.3. Սնանկության վարույթում էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացվող գործողությունների առանձնահատկությունները

1. էլեկտրոնային համակարգի միջոցով պարտատերերի ժողովը հրավիրվում և անցկացվում է համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին համահունչ եղանակով: Պարտատերերի ժողովը կարող է անցկացվել էլեկտրոնային համակարգի

միջոցով, եթե ժողովին մասնակցելու իրավասություն ունեցող բոլոր անձինք հանդիսանում են էլեկտրոնային համակարգն օգտագործող: Անկախ ժողովի անցկացման եղանակից (առկա կամ հեռավար) ժողովի հրավիրման մասին ծանուցումը էլեկտրոնային համակարգն օգտագործողներին կարող է ուղարկվել էլեկտրոնային համակարգի միջոցով:

2. Էլեկտրոնային համակարգի միջոցով պարտատերերի խորհրդի նիստերը հրավիրվում և անցկացվում են պարտատերերի ժողովի հրավիրման և անցկացման՝ էլեկտրոնային համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին համահունչ եղանակով:

3. Եթե պարտապանը, պարտատերերը, ինչպես նաև սնանկության վարույթով շահագրգիռ այլ անձինք էլեկտրոնային համակարգն օգտագործող անձ են, ապա կառավարիչը սույն օրենքով սահմանված իր գործառույթներն իրականացնում է էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին համահունչ եղանակով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

4. Եթե պարտապանը, պարտատերը կամ սնանկության վարույթով շահագրգիռ այլ անձը էլեկտրոնային համակարգն օգտագործող անձ չէ, ապա սնանկության վարույթում վերջինիս հասցեագրված դատավարական և այլ փաստաթղթերը ուղարկվում են սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:»:

Հոդված 33. Օրենքի 93-րդ հոդվածի 6-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 34. Օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ֆիզիկական անձի առողջացման ծրագիրը ներկայացնելու, հաստատելու հետ կապված հարաբերությունների նկատմամբ տարածվում են իրավաբանական անձանց համար սույն օրենքով սահմանված իրավակարգավորումները, եթե այլ բան սահմանված չէ սույն հոդվածով: Ֆիզիկական անձի առողջացման ծրագրում կարող է օգտագործվել նաև պարտապանի աշխատավարձի այն մասը, որի վրա Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բռնագանձում տարածվել:»:

Հոդված 35. Օրենքի 95-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «վաճառքի» բառից հետո լրացնել «(բռնագանձման)» բառը, «բացառությամբ» բառից հետո լրացնել «պարտապանի աշխատավարձի ու դրան հավասարեցված այլ վճարումների,» բառերը, իսկ «դրան» բառը փոխարինել «սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուն» բառերով.

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Պարտապանի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների գանձումն իրականացվում է հաշվի առնելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 6–րդ գլխով սահմանված կարգավորումները և սնանկության վարույթի առանձնահատկությունները: Սույն մասի գործողությունը տարածվում է ինչպես մինչև սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահը վճարված աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարներից կատարվող գանձումների վրա, այնպես էլ պարտապանի՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ստացվող աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարներից կատարվող գանձումների վրա:».

3) լրացնել նոր 3.1-ին, 3.2-րդ և 3.3-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Ֆինանսական առողջացման ծրագիր հաստատված չլինելու կամ դադարեցվելու դեպքում, սնանկության վարույթի ցանկացած փուլում դատարանը՝ կառավարչի դիմումի հիման վրա, առանց դատական նիստ հրավիրելու կայացնում է որոշում՝ պարտապանի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների բռնագանձման ենթակա մասից գանձումներ կատարելու վերաբերյալ: Դատարանը մերժում է կառավարչի դիմումը, եթե, հաշվի առնելով պարտատերերի պահանջների չափը, գտնում է, որ պարտապանի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների չափը այնքան փոքրարժեք է, որ ողջամիտ չէ դրա նկատմամբ բռնագանձում տարածելը, ներառյալ, եթե՝

1) աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները չեն գերազանցում նվազագույն աշխատավարձի 150-ապատիկը կամ

2) աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների բռնագանձմամբ պարտատերերի պահանջները չեն բավարարվելու մինչև 48 ամսվա ընթացքում:

3.2. Սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված դատարանի որոշումը կառավարիչը ստանալուց հետո եռօրյա ժամկետում ուղարկում է պարտապանի գործատուին: Դատարանի որոշումը հիմք է գանձման ենթակա գումարը գործատուի կողմից պարտապանի սնանկության հատուկ հաշվին փոխանցելու համար:

3.3. Դատարանի կողմից կառավարչի դիմումը մերժելը արգելք չէ կառավարչի կողմից կրկին դատարան դիմելու, եթե մինչև սնանկության գործի ավարտը կառավարչին հայտնի է դարձել պարտապանի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների անհրաժեշտ չափով աճի մասին: Սույն մասով նախատեսված կարգով կրկին դիմելու դեպքում դատարանը դիմումը քննում է սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված կարգով:»:

Հոդված 36. Օրենքի 97-րդ հոդվածի «ա» կետում «երկրորդ մասով» բառերը փոխարինել «չորրորդ մասով» բառերով:

Հոդված 37. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված սնանկության դիմումների վրա:

3. Սույն օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ կետը ուժի մեջ է մտնում հրապարակային սակարկությունների համար նախատեսված էլեկտրոնային կայքի գործարկման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հայտարարության հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

4. Սույն օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ կետն ուժի մեջ մտնելուց հետո բոլոր սնանկության գործերով (անկախ սնանկության վարույթը հարուցվելու պահից) առաջին (հերթական) աճուրդները կազմակերպվում և անցկացվում են հրապարակային սակարկությունների համար նախատեսված էլեկտրոնային կայքի միջոցով (էլեկտրոնային աճուրդով)՝ Օրենքի 76-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված կարգով, իսկ աճուրդները, որոնց մասին հայտարարությունները հրապարակվել են մինչև սույն օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ կետն ուժի մեջ մտնելը, անցկացվում են այդ հայտարարությունները հրապարակելու պահին գործող կարգով:

~~3~~5. Սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները ուժի մեջ են մտնում Բարձրագույն դատական խորհրդի՝ էլեկտրոնային համակարգի գործարկման մասին հայտարարության հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

4~~6~~. Սույն օրենքի 34-րդ և 35-րդ հոդվածներով նախատեսված կարգավորումները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված սնանկության գործերի վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-696-06.11.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	**«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	**Նոր խմբագրությամբ շարադրվող 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունից,» բառերը և կետադրական նշանը:** ««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածի 1-ին	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			մասի 6-րդ կետը կարգավորումներ է պարունակում պարտապանի կողմից սեփական սնանկությունը ճանաչելու կամ սնանկության վտանգի դիմում ներկայացնելու դեպքում պարտապանի կողմից պարտադիր ներկայացման ենթակա փաստաթղթերի վերաբերյալ, այդ թվում՝ պարտապանին սեփականության իրավունքով (կամ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում) պատկանող գույքի և այլ գույքային իրավունքների առկայության կամ բացակայության մասին, որոնք ստացվում են անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքի (իրավունքների) պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններից, որոնց թվում հիշատակվում է նաև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը:		

			Հարկ է ել, որ նախարարությունը քաղաքացիների, անհատ ձեռնարկատերերի կամ իրավաբանական անձանց պատկանող գույքի և այլ գույքային իրավունքների գրանցման (հաշվառման) գործառույթ չի իրականացնում, ինչպես նաև նշվածի առնչությամբ Նախարարությունում որևէ տեղեկատվություն առկա չէ: Այնուամենայնիվ, նախարարությունը ներկայումս էլ բազմաթիվ դիմումներ կամ հարցումներ է ստանում քաղաքացիներից, իրավաբանական անձանցից, փաստաբաններից, սնանկության կառավարիչներից և սնանկության դատարաններից: Թերևս դիմում-հարցումների նման քանակը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մինչև 2019 թվականը տրանսպորտի ոլորտը,		

			այդ թվում՝ նշված ոլորտում լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման գործառույթը վերապահված է եղել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը, սակայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում 2019 թվականի մայիսի 8-ի ՀՕ-31-Ն օրենքով կատարված փոփոխություններով և լրացումներով այդ գործառույթը վերապահվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը: Նշվածով պայմանավորված՝ Նախարարությունում տրանսպորտի ոլորտին վերաբերող ամբողջ տեղեկատվությունը փոխանցվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը:		

2.	***ՀՀ կառավարություն***	**«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդված**	**Սահմանել հոդվածի կետերի ճիշտ հերթականություն:**	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
3.	***ՀՀ կառավարություն***	**«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 24-րդ հոդված**	**Նոր խմբագրությամբ շարադրվող 73-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությունում «դատավորն» բառը փոխարինել «դատարանն» բառով, իսկ երկրորդ նախադասությունում «Դատավորի» բառը փոխարինել «Դատարանի» բառով՝** հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			պահանջը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:		
4.	***ՀՀ կառավարություն***	**«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 26-րդ հոդված**	2-րդ կետում «չորրորդ նախադասություն» բառերը փոխարինել «չորրորդ և հինգերորդ նախադասություններ» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է Օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր՝ չորրորդ և հինգերորդ նախադասություններ, այնինչ Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ կետում նշվել է միայն չորրորդ նախադասությունը լրացնելու վերաբերյալ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

5.	***ՀՀ կառավարություն***	**«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 26-րդ հոդված**	Լրացնել նոր՝ 6-րդ և 7-րդ կետեր, որոնցով «Սնանկության մասին» օրենքի 76-րդ հոդվածը լրացվում է նոր 9.1-ին, 9.2-րդ և 11-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. «9.1. Սնանկության գործով հրապարակային սակարկություններին չեն կարող մասնակցել՝ 1) սակարկությունների կազմակերպիչ կառավարիչը, 2) սակարկությունների կազմակերպիչ կառավարչի երեխաները, ծնողները, ամուսինը, տատը, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև սակարկությունների կազմակերպիչ կառավարչի ամուսնու ծնողները, տատը, պապը, եղբայրները և քույրերը, 3) այն անձինք, որոնք սակարկություններով վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք: 9.2. Սակարկությունների արդյունքում վաճառված գույքի առուվաճառքի պայմանագրեր կնքելիս պայմանագրերի էական պայմանները պետք է համապատասխանեն սակարկությունների մասին հրապարակային ծանուցմամբ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			սահմանված պայմաններին:»: «11. Սնանկության վարույթում կազմակերպված էլեկտրոնային աճուրդը կարող է անվավեր ճանաչվել միայն շահագրգիռ անձի հայցով՝ դատական կարգով, եթե աճուրդն անց է կացվել սույն հոդվածի 9.1-ին և 9.2-րդ մասերով սահմանված պահանջների կամ սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգում որպես էական նշված պայմանների խախտումներով: Ընդ որում, սույն հոդվածի 9.1-ին մասի 3-րդ կետով սահմանված դեպքում աճուրդը կարող է անվավեր ճանաչվել, եթե սակարկությունների արդյունքում հաղթող է ճանաչվել այն անձը, որը սակարկություններով վաճառվող լոտի նկատմամբ չէր կարող ունենալ սեփականության իրավունք:»: Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ սնանկության վարույթում հրապարակային սակարկությունների իրականացումը նախատեսվում է կազմակերպել էլեկտրոնային համակարգի միջոցով, իսկ Օրենքում նախատեսված չեն էլեկտրոնային աճուրդները անվավեր ճանաչելու հիմքերը:		

6.	***ՀՀ կառավարություն***	**«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 27-րդ հոդված**	Օրենքում որդեգրված ընդհանուր մոտեցումները պահպանելու և առաջարկվող փոփոխության բովանդակային նշանակությունը ընդգծելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 27-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 77-րդ հոդվածում նոր լրացվող 1.1-ին մասի 6-րդ պարբերությունում «ծանուցումն ստանալու (սույն օրենքով սահմանված կարգով՝ ծանուցված համարվելու)» բառերը փոխարինել «ծանուցվելու» բառով, քանի որ ծանուցվելու փաստն արդեն ենթադրում է ծանուցումը ստանալը և բովանդակային առումով կլանում է նշված ձևակերպումը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
7.	***ՀՀ կառավարություն***	**«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 32-րդ հոդված**	Նախագծի 32-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 10.1-ին գլխի 90.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ դատարանը, սնանկության գործով կառավարիչները, պարտապանը, պարտատերերը, ինչպես նաև սնանկության վարույթով	Ընդունվել է: Կատաչվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			շահագրգիռ այլ անձինք սնանկության գործերի հետ կապված էլեկտրոնային համակարգից օգտվում են սույն օրենքով սահմանված կարգով, իսկ սույն օրենքով կարգավորված չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ դատարանի և դատավարության մասնակիցների համար սահմանված կարգով: Էլեկտրոնային համակարգերի ներդրման գործընթացը պատշաճ ապահովելու և «Հայաստանի		

			Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերին Օրենքով առաջարկվող հասկացությունները և համակարգն օգտագործող		

			անձանց շրջանակի վերաբերյալ որդեգրված մոտեցումներին համապատասխանեցնելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 32-րդ հոդվածով նոր լրացվող 90.2-րդ հոդվածի 1-ին մասում «այն» բառից հետո լրացնել «ֆիզիկական» բառը, իսկ 2-րդ մասում «իմաստով» բառից հետո լրացնել «իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը,» բառերը և կետադրական նշանները:		
8.	***ՀՀ կառավարություն***	**«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի**	Հիմք ընդունելով Նախագծի 26-րդ հոդվածում կատարվող լրացումը (6-րդ և 7-րդ կետեր), որի պատշաճ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

		նախագծի 37-րդ հոդված	կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտ է սահմանել նշված կարգավորումների ուժի մեջ մտնելու և անցումային առանձին դրույթներ, առաջարկում ենք Նախագծի 37-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ մասերով. «3. Սույն օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ կետը ուժի մեջ է մտնում հրապարակային սակարկությունների համար նախատեսված էլեկտրոնային կայքի գործարկման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության		

			հայտարարության հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից: 4. Սույն օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ կետն ուժի մեջ մտնելուց հետո բոլոր սնանկության գործերով (անկախ սնանկության վարույթը հարուցվելու պահից) առաջին (հերթական) աճուրդները կազմակերպվում և անցկացվում են հրապարակային սակարկությունների համար նախատեսված էլեկտրոնային կայքի միջոցով (էլեկտրոնային աճուրդով)՝ Օրենքի 76-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված կարգով, իսկ աճուրդները,		

			որոնց մասին հայտարարությունները հրապարակվել են մինչև սույն օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ կետն ուժի մեջ մտնելը, անցկացվում են այդ հայտարարությունները հրապարակելու պահին գործող կարգով:»:		